

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Արդյունաբերության և շինարարության կառավարման վերակառուցումը, ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության խորհրդի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Պետական գիտա-տեխնիկական կոմիտեի կազմակերպումը անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին ու անսահման հնարավորություններ բացեցին արտադրության հետագա կատարելագործման և ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերելքի համար:

Հայկական տնտեսական վարչական շրջանի ժողովրդական տնտեսության խորհրդի աշխատանքի մեկ տարվա արդյունքները ցույց են տալիս, որ ղեկավարության մոտեցումը ձեռնարկություններին թույլ տվեց ավելի էֆեկտիվորեն օգտագործել նյութա-տեխնիկական ռեսուրսները, շարժման մեջ դնել թափնված և չօգտագործվող ներքին ռեզերվները, բարձրացնել արդյունաբերության աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը և դրանով իսկ ապահովել տեխնիկական անշեղ պրոգրեսը:

Գիտա-տեխնիկական և արտադրական առավելորդ փորձի փոխանակումը ձեռնարկությունների, գիտա-հետազոտական կազմակերպությունների և արդյունաբերության զանազան ճյուղերի միջև, ինչպես ռեսպուբլիկայի ներսում, այնպես էլ մյուս տնտեսական վարչական շրջանների հետ, պետք է կարևոր տեղ գրավի ժողտնտխորհի գործունեության մեջ:

Նման մի փորձի կենսագործման նպատակով Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության խորհուրդը և Մինիստրների Սովետի Պետական գիտա-տեխնիկական կոմիտեն ներկա համարով սկսում են իրենց տպագիր օրգանի՝ «Հայաստանի արդյունաբերությունը» տեխնիկա-տնտեսական բյուլետենի լույս ընծայումը:

Բյուլետենը կոչված է նպաստելու մեր ռեսպուբլիկայի գիտա-տեխնիկական պրոգրեսի նըվաճումների պրոպագանդային, ձեռնարկություն-

ների տեխնիկական մակարդակի բարձրացմանը, նրանց մասնագիտացմանը և կոոպերացմանը, ներքին ռեզերվների առավելագույն օգտագործմանը: Բյուլետենում կարտացոլվեն ժողովրդական տնտեսության խորհրդի առջև կանգնած խնդիրները՝ արտադրության ծավալը մեծացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, արտադրանքի ինքնարժեքը իջեցնելու և նրա սրակը բարելավելու համար:

Բյուլետենի ղեկավոր խնդրն է՝ ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման պրոբլեմների լուսաբանումը, առաջավոր փորձի հարցերի պարզաբանումը՝ ռեսպուբլիկայի արդյունաբերության բոլոր ճյուղերում, նոր տեխնիկայի և պրոգրեսիվ տեխնոլոգիայի արմատավորման, արտադրական՝ պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման, արտադրության էկոնոմիկայի ու կազմակերպման բնագավառում: Միաժամանակ, հատուկ ուշադրություն է հատկացվելու գործարանների, ֆաբրիկաների և կառույցների նորարարների, գյուտարարների ու ուսցիոնալիզատորների արտադրական-տեխնիկական փորձի միջնորդային փոխանակմանը:

Բյուլետենում կղեկավարվեն տեղեկություններ և ինֆորմացիոն նյութեր, որոնք կվերաբերեն Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության խորհրդի և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Պետական գիտա-տեխնիկական կոմիտեի գործունեությանը, ինչպես նաև գիտության ու տեխնիկայի նորությունները ՍՍՌՄ-ում և արտասահմանում:

Բյուլետենի խմբագրական խորհուրդը դիմում է ձեռնարկություններին ու կառույցներին ղեկավարներին, ինժեներներին, տեխնիկներին, վարպետներին, արտադրության նորարար քանվորներին, գիտա-հետազոտական և նախադժման ինստիտուտների, կոնստրուկտորական բյուրոների և լաբորատորիաների, ժողովրդական տնտե-

սովթյան խորհրդի ապարատի աշխատողներին՝
ակտիվ մասնակցութիւն ցույց տալ բյուլետենի
աշխատանքին, դառնալ նրա մշտական և գոր-
ծունյա թղթակիցները:

Խմբագրական խորհուրդը հուլյս է հայտնում,
որ արդյունաբերութեան և շինարարութեան աշ-
խատողները կպատմեն իրենց աշխատանքի փոր-
ձի մասին, բյուլետենի էջերում հանդես կգան
իրենց հոգւածներով և ինֆորմացիոն հաղորդա-

գրութիւններով այն ամենի մասին, ինչ նոր է
և պրոգրեսիվ: Դա կնպաստի մեր ռեսպուբլի-
կայի ժողովրդական տնտեսութեան զանազան
ճյուղերը նոր, է՛լ ավելի բարձր տեխնիկական
մակարդակի հասցնելուն:

«Հայաստանի արդյունաբերութիւնը» տեխնի-
կա-տնտեսական բյուլետենը լույս կտեսնի ամի-
սը մեկ անգամ հայերեն և ռուսերեն լեզուե-
րով: